

431/6



ՄԱՍՍԱՅԱԿԱՆ
Կ Ի Ն Ո Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԿԻՆՈՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ



778.5

4-

Մ Ա Ս Ս Ա Յ Ա Կ Ա Ն
Կ Ի Ն Ո Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

ՀԱՆՐԱՄԱՉԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԿԻՆՈՄԱՍՍԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ

19210
A 388x



Պատ. խմբագիր՝
Դ. ԴԶՆՈՒՆԻ

Մտնադրել՝ Կ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. ապրիլի 27-ին,
Մատրագրվել է ապագրելու 1934 թ. մայիսի 16-ին
Փլավիկա 6939, Տիբած 1500, Պատվեր № 318

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՆԻՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԱՆԳՅԱՆ 50


ՅԵՐԿՈՒ ԽՐԱԳ

Կուլտուրական կինոյի կադմակերպման և կինոյի շուրջը մասսայական, քաղաքատիրակազմական աշխատանքները ծավալման գործում մի կողմից՝ անհրաժեշտ փորձի բացակայութիւնը և մյուս կողմից՝ հայերեն լեզվով համապատասխան գրականութիւն չունենալով՝ մեր սառչ հրամայողական անհրաժեշտութեամբ գրեցին կինո մասսայական աշխատանքներով գրադվող կուլտրանակայինի համար լույս ընծայել մի հանրամատչելի ազդեցաւոյութիւնը և մյուս աշխատութիւնն որդինաբնութ չունի, այլ ավելի շուտ իրենից ներկայացնում և այդ ուղղութեամբ յեղած ոտակերեն գրականութեան հանրամատչելի շարադրութիւն, հարմարեցրած Հայաստանի պայմաններին:

Զնայած այդ՝ բանին, մենք համոզված ենք, վոր բրոշյուրը լուր հնարավորութիւններն ունի ոգնելու կինո մասսայական աշխատանքներով գրադվող ընկերւոջն իր պրակտիկ աշխատանքները ժամանակ:

Մի կողմից անհրաժեշտ փորձի կուտակումը և մյուս կողմից կինո մասսայիկները աբծեցավոր դիտողութիւնները: Բրոշյուրի թերութիւնները մասին՝ հնարավորութիւն կտան մեզ հետագայում վերածափելու բրոշյուրը, վերացնելու մի շարք թերութիւնները և ավելի վառակալ գործ տալու կինո մասսայական աշխատողին:

ՀՍԽՀ ԺԿԽ-ին կից կիւն-Ֆոսո
արդյունաբերւթյան վարչարքուն



ՄԻՋՈՅ Ե

Կինոն, վերջինս արվեստի մի ճյուղ, բացառիկ կարևորութիւնն ունի հասարակական տնտեսական-քաղաքական կյանքը հիմնովին վերափոխելու բնազավառումն Կինոն հզոր միջոց է ներազդելու աշխատավորական լայն զանգվածներին գիտակցական, հոգեկան, դեղորսվեստական, քաղաքական աշխարհի վրա, նրանց մտքի զարգացմանը յենթարկելու սոցիալիստական շինարարութեան հրահասող խնդիրները լուծելու շուրջը՝ Հենց այդ պատճառով էլ ընկ. Լենինն ասել է, վոր «արվեստի բոլոր ճյուղերից մեզ համար ամենակարևորն իմ կարծիքով՝ կինոն է»:

Մտաւոր հաջողութիւններ են ձեռք բերված սոցիալիզմի համար մղվող տայքաբը կինոյի միջոցով վերաշտաղրելու գործում: Սակայն կինոյի պրոլետարական բովանդակութիւնն է—մտաչելի ձևով լայն աշխատավորական մասսաներին հասցնել նրանց հուզող խնդիրները, սոցիալիստական շինարարութեան խնդիրները սերտորեն շաղկապելով մասսաների կինո սպասարկման գործի հետ և այդ միջոցով կինոն դարձնել սոցիալիստական սլաններին կատարման հզորագույն միջոցներից մեկը: Կինոյի շուրջը տարվող մասսայական-քաղաքական աշխատանքները հանդիսանում են այն կարևորագույն հատկութիւնը, վորով Խորհրդային կինոմատոգրաֆիան տարբերվում է բուրժուական կինոյից:

Յորհրդային կինոն չի կարող միայն կինո-նկար-
ների ցուցադրման վայր լինել: Եկինոն պիտի լինի
պրոլետարիատի գործիքը մյուս դասակարգերի վրա իբր
հեղեմոնիայի գեկավարութեամբ և ազդեցութեան հա-
մար մղվող պայքարում, կուսակցութեան՝ ձեռքում նա
պիտի հանդիսանա կոմունիստական լուսավորութեան
և ազիտացիայի հզորագույն միջոցը— ասված է Համ.
Կ. (բ) Կ. 13-րդ համագումարի բանաձևում: Այնուհե-
տև կինոյի խնդիրը կայանում է այն բանում, վոր նա
սպահովի սոցիալիզմի շինարարների՝ բանվորների և
կուլտնտեսականներին ձգտումը կինոյից ստանալու հա-
ճույք, հանգիստ, իր կուլտուրական, քաղաքական մա-
կարդակի բարձրացումը (Համ. Կ. Կ-ի գեկտեմբերյան
սլենումի բանաձևից):

Կինոն պիտի լինի պրոլետարական և աշխատա-
վորական մասսաների կուլտուրական հանգստի գեղար-
վեստական սպասարկումը, նրանց սոցիալիստական
վերադաստիարակման և քաղաքական լուսավորական
աշխատանքների հետ խելացիորեն շաղկապելու կուլ-
տուրական ոջախը, Հենց այդ աշխատանքների վրա յե,
վոր մինչև այժմս պատշաճ ուշադրութեան չեն դար-
ձրել վոչ միայն կինո կադմակեբութեանները, այլև
շատ շրջանային կադմակեբութեաններ:

Չնայած այն խոշոր նշանակութեանն ու գերին,
վոր ունի կինոն սոցիալիզմի կառուցման և դասակար-
գերի լիկվիդացիայի գործում, նա գեուս չի արժանա-
ցել մեր մի շարք շրջանային կադմակեբութեաններին
պատշաճ ուշադրութեանը:

Հաճախ, յեթև կատարվում է այս կամ այն նկար-
ի սոսկ ցուցադրումը, կինո սպասարկումն ամբողջա-
պես սպահոված և համարվում: Յերբեմն վորոշ աշխա-
տողներ միանգամայն սխալ են պատկերացնում մեր

խնդիրները կուլտուրական շինարարության բնագա-
վառուժ և միանդամայն անթույլատրելիորեն թերա-
դնատառուժ են կուլտուրական հեղափոխության խըն-
դիրները, աչդպիսին կրպիտ կերպով անջատելով սո-
ցիալիստական շինարարության ընդհանուր գործից։
Անկասկած յուրաքանչյուր կոմունիստ, կուսքջիջ, հար-
վածային պիտի յեռանդուն պայքար մղի կուլտուրա-
թյան առաջադրած պլանների կատարման համար,
բայց խնդիրն էլ այն է, վոր կուլտուրաթյունը սոցիա-
լիզմի կատուցման կարևորագույն նակատամասերից
մեկը միշտ համարել և համարուժ և կուլտուրական
հեղափոխությունը։ Գրանուժ համարվելու համար մեջ
բերենք ընդ. Լենինի հեանյալ խոսքերը.

«Մեզ համար բավական է այժմ կուլտուրական հե-
ղափոխություն, վորպեսզի դառնանք ամբողջապես սո-
ցիալիստական յերկիր»։

Իսկ կուլտուրական հեղափոխության կարևորա-
յույն սպակը կլինան է, վորը սակայն պատշաճ գնա-
հատության յերբեմն չի արժանանուժ։

Նման արամադրությունների արդյունք և նակ
այն, վոր ինչպես ժինոսաշխատողները, նույնպես և
դյուզական ու շրջանային շատ կազմակերպություն-
ներ, անթույլատրելի կերպով թերադնատառուժ են կի-
նո նկարի շուրջը ծավալվելիք մատայական-քաղաքա-
կան աշխատանքները։ Դեռ ավելին։ Այդ բնագավա-
ռուժ—շատ շրջաններու—անդամ առջին քայլերը չեն
արված։ Կինոմատտայական աշխատանքը թողնուժ են
միայն մեխանիկի վշա։ Այդ գործին չեն լծվուժ գյու-
ղի կուլտուրական ուժերը։

ՃԱՆԱԶԵԼ, ՇՐՋԱՆԸ, ՏԱՒ, ՆՐԱՆ ՎՈՐԱԿԵԱՒ, ՌԵՊԵՐՏՈՒԱՐ

Ամենադիտավոր և անթույլատրելի բացը կինո
սպատարկման բնագավառուժ այն է, վոր մենք չու-

նենք մինչև այժմ ճշտված համապատասխան ռեպրե-
տուար, վորի հետևանքով գյուղի և քաղաքի կինո
սպասարկումը չի շաղկապվում անցկացվող անտեսա-
կան-քաղաքական կամպանիաներին: Որինակ՝ շատ
հաճախ դարնանացանի վերաբերյալ նկարը գյուղ և
մտնում բերքահավաքի յնտուն շրջանում, կամ բամբակ-
ացան շրջաններն են ուղարկում ձխախոտագործու-
թյան վերաբերող ազրոֆիլմ և ընդհակառակը: Մա աբ-
դյունք և այն բանի, վոր շատ կինո-աշխատողներ
(հատկապես պրոկատի գծով) բավարար սլատկերա-
ցում շունեն տվյալ շրջանի եկոնոմիկայի, կուլտու-
րական-քաղաքական կյանքի մասին, չգիտեն բնակ-
չության կենցաղը, սովորությունները, մոտիկ անցյա-
լի պատկերը և այլն:

Այդ միանգամայն աննորմալ դրությանը վերջ
տալու համար, անհրաժեշտ և, վորպեսզի կինո աշխա-
տողը, հատկապես կինո-մեխանիկը, լրիվ սլատկերա-
ցնի տվյալ շրջանի անտեսական-քաղաքական-կենցա-
ղային պատկերը. յեթե նա ուզում և իր մասսայական-
քաղաքական աշխատանքները դնի իրական հողի վրա,
նա պետք և նկարի բովանդակության համապատաս-
խան փաստական նյութեր վերցնի տվյալ շրջանի կամ
գյուղի իրական կյանքից:

Այդ նպատակով միանգամայն անհրաժեշտ և ու-
նենալ յուրաքայուր շրջանի սլասպորտ-անցուցիչը,
վորում փաստական տվյալներով պետք և ցույց տրվեն
հետևյալ տեղեկությունները՝

1. Սպասարկվող կետերը, կետերի աշխարհագրա-
կան դիրքը, նրանց միջի տարածությունը, կապի և
հաղորդակցության միջոցները, աղբաբնակության կաղ-
մը (դասակարգային, աղբային, կուսակցական, սեռա-
կան):

2. Բնակչութեան գրադուանքը (անասնապահութեան, դաշտավարութեան, արդյունարերութեան—մշակ-վող կուլտուրաներ, նրանց տեսակարար կշիռը և այլն)։

3. Շրջանի պատմական տնտեսական համառոտ ուրվագիծը, ուր պետք և հիշատակվի քսաներորդ դարից սկսած պատմական դեպքերը, այն է՝ մասնակցութեանը հեղափոխական շարժումներին, խորհրդայնացման եռասնները, սոսիալիզմի դաշնակցութեան դեմ, ազգայնական և կրոնական կադմակերպութեաններին դե-րը, շրջանի տնտեսական զարգացման հետադարձները, Զ-րդ հնգամյակի նախադեմները—կիրառումը, կոլեկ-տիվացման հաջողութեանները և այլն։

4. Կուլտուրական աճման համառոտ ուրվագիծը—գաղութներին, հիվանդանոցներին, քաղուս հիմնարկներին թիվը, գրադիտութեան տեղումը և այլ տվյալներ։

Այնուհետև տվյալներ կենցաղի, սովորույթների, կրոնական դասնանքի, հակակրոնական շարժման, խորհրդային, կուսակցական և այլ կադմակերպութեան-ներին կառուցվածքի և այլնի մասին։

Անցադրի կարևոր քաղաքական նշանակութեան-նից յեղնելով, անհրաժեշտ և այդպիսին կազմելու աշ-խատանքներին մասնակից դարձնել վոչ միայն կինո աշխատողներին, այլև շրջանի կուսակցական, կոմյունի-ստական և խորհրդային կադմակերպութեաններին։

Այդպիսի անցագիրը լիակատար հնարավորու-թեան և տարիս լուրաքանչյուր կինո աշխատողին կազմակերպվելու միջավայրին համապատասխան, ճիշտ կերպով նախադեմելու և պլանավորելու տվյալ շրջանի կինո սպասարկումը և քաղուս մասսայական աշխա-տանքներին կադմակերպումը։

Կինո սպասարկումը և մասսայական քաղաքա-կան աշխատանքները ժապավենի շուրջը, մեզ համար

ինքնանպատակ չեն: Այդ աշխատանքների նպատակը պիտի լինի՝ 1. նկարը դյուրըմբռնելի դարձնել դիտողի համար, 2. մասսայի ուշադրութիւնը սրել սոցիալիստական շինարարութեան հրատապ խնդիրների վրա, 3. նկարի բովանդակութեանը համապատասխանող տեղական նյութերն ոգտագործել՝ պայքարելու զանազան բացասական յերևույթների, սովորույթների, հասարակական շարիքների դեմ (հարեցողութիւն, կրոնամոլութիւն, անկազմակերպութիւն, պրոգուներ և այլն), 4. բարձրացնել աշխատավորութեան հեղափոխական դոգմութիւնը, խորացնել այդ մասսայի մեջ դասակարգային տեղութիւնը ժողովրդի թշնամիների կուլակ-դաշնակցական տարրերի նկատմամբ, 5. բարձրացնել աշխատավորութեան կուլտուրական մակարդակը: Սովորեցնել նրանց նոր ձևով աշխատելու, յուրացնելու 1-ին հնդամյակի կենսագործման հետևանքով ստեղծված նոր արտադրութիւնը և նոր տեխնիկան, և այլն: Իսկ այդ գործում խոշոր չափով կարող ե ոժանդակութեան զալ կազմված անցագիրը: Աորպեսզի հնարավոր լինի կինո մասսայական աշխատանքները սերտորեն շաղկապել տվյալ շրջանի անտեսական-կուլտուրական շինարարութեան կոնկրետ խնդիրների հետ և ճշտորեն իրագործել կինո մասսայական աշխատանքների վերևում նշված հիմնական նպատակադրումները, խիստ կանուր և անցագիրը լրացնել նոր դաստական մատերիսներով՝ վերցրած տվյալ շրջանի անտեսական-քաղաքական կյանքից և այլն:

Անցագիրը չափազանց ոգտակար կլինի կինո աշխատողի-մասսավիկի համար, իր մասսայական-քաղաքական աշխատանքները կազմակերպելու աջն հաշվով, վորպեսզի լուծում տա դիտողին հուզող, նրան հետաքրքրող դանազան հարցերին: Այդ իսկ պատճա-

տով մաստավիկի ամբողջ խնդիրը պիտի լինի իր աշխատանքները կազմակերպել այն հաշվով, վերաբերել աշխատավորը դալով կինո վոչ միայն գլխաբանա, հարուրդ առ իր կուլտուրական, դեղարվեստական պահանջներին, այլև ստանա իր վալիա աշխատանքների ծրագրերը՝ դաշտում կամ գործարանում:

ԼԻՆԵՆԻ ՄԱՍՍԱՎԻԿՆԵՐ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Նկարի ցուցադրումը կարելի չե կազմակերպել դանազան յեղանակով ու ձևերով: Կարելի չե որինակ՝ նախորոք կազմակերպել դրույց՝ նկարում շոշափվող հարցերի շուրջը, կամ այդ հարցերը փոքրիկ հողվածով կարելի չե յուսաբանել տեղական պատի լրագրում: Կամ առաջիկա կինո-սեանսի վերաբերյալ կարելի չե կազմակերպել ֆոտո նկարների և այլ նյութերի ցուցահանդես, ինչպես և աչքի ընկնող վայրում կախ տալ պատկերավոր աֆիշա-հայտարարություն, փակցնել նկարի բովանդակության համապատասխանող լողունգներ և այլն:

Իրա հետ միասին դանազան ձևով և կատարվում նկարի ցուցադրումը Մի դեպքում ուղղակի բավականանում են նկարի սոսկ ցուցադրումով, վերը միանգամայն անընդունելի ձև և, առանձնապես դյուրական շրջաններում, ուր կուլտուրական վորոշ հետամնացության և ուսանողներին չափապետելու հետևանքով հաճախ անմտաչելի չե դառնում նկարի բովանդակությունը:

Ուրիշ դեպքում ցուցադրման միջոցին կարգացվում են մակադրությունները, բացատրվում առանձին մասերը, կազմակերպում են դրույց, ցուցահանդես և այլն:

Այդ բոլորը մի ավելորդ անպամ ասպացուցում են, վոր կինո աշխատողին՝ սկսած կինո մեխանիկից, մեծ պահանջներ են առաջադրվում, և վոր նա անպայմանորեն պետք է նախապատրաստվի կատարելու այդ պահանջները: Այլ կերպ ասած, կինո-աշխատողի և կինո-մեխանիկի աշխատանքը չպետք և սահմանափակվի միայն կինո-աստղաբան գործի զննելով. դա նրա աշխատանքի մի մասը, այն ել վոչ ամենակարևոր մասն և կազմում: Կինո աշխատողը պետք և միաժամանակ մասսայական-քաղաքացիական աշխատող լինի, վոր նրա աշխատանքների կարևորագույն մասը կազմի մասսայական-քաղաքական, դաստիարակչական աշխատանքները. առանց դրա յերբեք հնարավոր չէ կինոն զարձանել սոցիալիզմը կառուցող միլիոնավոր մասսաների կամունխատական դաստիարակության հղոր միջոց:

Բնական և, վոր ամբողջ կազմակերպչական, մասսայական աշխատանքները, վորոնք քանի դնում ավելի կարևոր նշանակութուն են ստանում, չեն կարող կատարվել միմիայն կինո աշխատողների միջոցով: Այդ խիսկ պատճառով միանդամայն անթույլատրելի պիտի համարել շատ շրջանային ու սյուլական կազմակերպութունների առանձին ընկերների անտարբեր վերաբերմունքը դեպի կինո մասսայական աշխատանքները:

Կինո մասսայական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման գործն ամբողջապես պետք և իրենց ձևով վերցնեն շրջանային, կուսակցական, կոմյերիս միության կոմիտեների կուլտպրոպները և ՄՏԿ քաղքամիները: Նրանք անպայմանորեն պետք և իրենք կինո աշխատողի հետ միասին կազմեն այս կամ այն կինո նկարի շուրջը կազմակերպվելիք մասսայական աշխատանքների սլանը, տրամադրեն համապատաս-

խան կազմերը այդ աշխատանքների կատարման համար, կատարեն աշխատանքի բաժանում և այլն, և այլն:

Այնուհետև այդ աշխատանքներում անալոյաման անհրաժեշտ և լայնորեն ներդրաձեղ ուսուցչութիւնը, կուլտ բանակայիններին, քաղլուս աշխատողներին, (կոլխոզային ակումբի, կարմիր անկյան վարիչներին, կուլտ կազմակերպիչ ընթերցողներին), դյուրատնտեսներին, բժիշկներին և այլն: Ինքն ազիւին՝ կոլխոզ ակումբների քաղլուս աշխատանքների մեջ անալոյաման զոյալի տեղ պետք և արժի կինո մասսայական աշխատանքներին: Նա անալոյաման պիտի ունենա այդ աշխատանքների պլանը՝ համաձայնեցւած շրջանային կուսկամբի, ՄՏԿ քաղլուսի և կինո աշխատողի հետ: Մասսայական աշխատանքների մեջ անալոյաման անհրաժեշտ և ներդրաձեղ նաև կոլտնտեսային ակալիլը, կամսոտլին, կին կազմակերպութիւնը և այլն:

Այդ աշխատանքների ամբողջ հաշոյութլուսը կապ ունի նաև կինո աշխատանքների պլանալորման հետ: Մինչև հիմա *զոչ միայն մեր շրջանային կինո աշխատողները, կինոքաղաները, այլև Հայկինոն չուսեն մշակւած հաստատուն ոնպերսուար և շրջաններին նկարներով տղահոլիլու գործը մատնւած և հաճախ պատահականութիւն: Անհրաժեշտ և արմատականորեն վտխել այս դրութլուսը:

Աշխատանքի պլանալորման հետ միասին դյուրական, կոլխոզային կազմակերպութլուսները, կինո աշխատողները պիտի կատարեն նաև անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք:

Անհրաժեշտ և յուրաքանչյուր դյուրութլում տոանձնացնել առանձին ձեռներեց ընկերներին, նրանց վրա շնել կինո մասսայական աշխատանքների կատարման պարտականութլուսը, նրանց կարողութլուսներին հա-

մասպատասխան: Որինակ, մեկին՝ կարելի չէ հանձնարարել լողունները և աֆիշաների գրելը, մյուսին՝ կոլխոզային բրիզադաներում նկարի շուրջը գրուցներ կազմակերպելը, 3-ին՝ պատի լրագրում հողված գրելը, 4-ին՝ կոլխոզի կյանքից նկարի բովանդակութայնը համապատասխանող նյութերի հավաքումը, 5-ին՝ նկարի բացատրությունը և վերջում կարծիքների ամփոփումը և այլն: Առանձնացված ընկերներից հիմնադրվում և կինո սերոզները, կամ կինո մասսավիկների խմբակ, վերոնց ղեկավարությունը պիտի գտնվի կինոբաղաների ձևաքին: Այդ խմբակների հետ վերջինս պիտի կատարի անհրաժեշտ աշխատանք (սեմինարներ, կինո սեանսի, դիմպուտի միատեղ կազմակերպում և այլն): Ուր այդպիսի խմբակ հնարավոր չի կազմակերպել, անհրաժեշտ և առանձնացնել կինո լիազոր:

Կինո սերոզների խմբակի և լիազորի հիմնական ֆունկցիան պիտի լինի մասսայական աշխատանքի կազմակերպումը: Նրանք պիտի նախապատրաստեն առաջիկա սեանսը, մասսայի ուշադրությունը բևեռեն ցուցադրվելիք նկարի վրա, նկարը շրջապատեն տեղական նյութով, կազմակերպեն զրույց, դեկուցում, ցուցահանույեա, լրագրային աշխատանք և այլն: Ակտիվը պիտի լայն ոճանդակություն ցույց տա կոլխոզները և այլ կազմակերպությունների հետ պայմանագրի կնքման գործում, նյութեր պատրաստի լուսաթերթի համար, կամ լույս ընծայի այդպիսին և այլն: Կինո սերոզների խմբակը և լիազորը մշտական կապ են պահպանում կինո բազավարի կամ մեխանիկի հետ և տեղյակ են պահում գյուղացիներին առաջիկա կինո սեանսի մասին՝ իրենց կատարելիք մասսայական աշխատանքների միջոցով: Կինո աշխատողը պարտավոր և կինո սերոզ-

ներին, կամ լիազորին վաղորոք հանգամանորեն ծանոթ պահել նկարի բովանդակութեան ձեռնարկվելիք մասսայական աշխատանքների ձևերի մասին, վերադիպին նրան ուղարկվում է նկարի հետ միասին (լիբրետո)։

Թմբուկը, լիազորը կամ կինո աշխատողը անսլայման պարտավոր են հաճախակի կինո սեանսից հետո կատարել դիտողների կարծիքները հաշվառում։ Նրանք պետի կողմակերպեն նաև նկարների մասսայական քննադատութեան, մասսայի դիտողութեանները, պահանջները և կարծիքները գրի առնեն, ուղարկեն կինո կազմակերպութեաններին և թերթերին՝ ոգտազործելու նպատակով։

Կինո աշխատանքներին չափազանց խանգարում է այն միանգամայն անթույլատրելի կարծիքը, վերը կա շատ դյուրական և շրջանային աշխատողների մեջ, (ինչպես նշում և Համ Կոմկուսի Կենտկոմի իր մայիսի 7-ի վերոշման մեջ), ըստ վերի դյուրի կինո սպասարկումը դիտվում և վերպես ձրի և բարեդործական մի գործ, վորն արժանի չի վորևե ուշադրութեան կամ ոժանդակութեան։ Բնական է, վոր ինչպես կինո աշխատողների, նույնպես և կինո սիրողների ձեռնարկելիք աշխատանքների հաջողութեանը կախված է այն բանից, թե վորքանով հաջողութեամբ կհաղթահարվեն այդ հետամնաց արամադրութեանները և լայն մասսաները կհամախմբեն կինոյի շուրջը։

ԿԻՆՈՍԵԱՆՍԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Այժմ անցնենք կինո մասսայական աշխատանքների առանձին ձևերի լուսաբանմանը։ Կինո սեանսի նախադատարատման աշխատանքները սովորաբար սկսվում են հայտարարութիւն-ափիւտայից։ Սահայն մին-

չեմ այժմ աֆիշաները գերազանցապէս հայտարարու-
թյան ընդմէջ են ունեցել: մինչդեռ աֆիշան պիտի
նպատակ ունենա նախապատրաստելու դիտող հասա-
րակութեանն առաջիկա կէնտ սեանսի համար, իբր բո-
ւանդակութեամբ շարժի այդ հասարակութեան հետա-
քրքրութեանը և նրանց ուշադրութեանը սրի այն հան-
դուցային խնդիրներէ վրա, վորքնք շոշափվում են
նկարում: Նախապատրաստված դիտողը ընտանորեն
լարված հետաքրքրութեամբ դիտելով նկարը, ի վիճա-
կի կլինի նաև ամբողջական պատկերացում ունենալ
նրա մասին և գտնելու իրեն հուզող հարցերի լուծու-
մը: Այդ իսկ պատճառով կէնտ-մասսայական աշխա-
տանքի կազմակերպիչը պիտի վերջ տա աֆիշաների
շարուն ձևին և նկարի ռեկլամացիան դնի այն
հաշվով, վոր արտահայտի նկարի հանդուցային խըն-
դիրները և շարժի մասսայի հետաքրքրութեանը Որի-
նակ՝ «Տաք աբյուս» նկարի ռեկլամները կարելի չե
գրել հետեյալ կերպ. «յեթե ուզում ես իմանալ ինչ-
պիտի մարդիկ և պատրաստում կարմիր բանակը, արի
կէնտ, դիտիր «Տաք աբյուս» նկարը. կամ «յեթե ու-
զում ես իմանալ ինչ և տալիս կազմակերպված կողմե-
տիվ տնտեսութեանը գլուղացուն, արի կէնտ, դիտիր
«Յերկրորդ քայլ» նկարը. բացատրական աշխատանք-
ները և հարցերի պատասխանը կտա այս ինչ ընկերը»:
Կամ թեկուզ վերջնենք «Մարդ և կապիկ» նկարը,
վորը շարժական հարմար նկար և հակակրօնական ազի-
տացիայի համար, այդ նկարի ռեկլամը կարելի չե գրել
այսպէս՝ «յեթե ուզում ես իմանալ վորտեղից և առա-
ջացել մարդը, շտապիր կէնտ, դիտիր «Մարդ և կա-
պիկ» նկարը: Մարդու ծագման մասին խոսելու յե
(աղգանուն), վերջում լինելու յե հարց ու պատաս-
խանի յերեկո, վիկտորինա, պարզնասարում» և այլն:

Ամեն կերպ պետք է աշխատել նկարի բովանդակու-
թյանը համապատասխանող տեղական յերևույթներ
լուսաբանել և եկլամամբ, շաղկապել տեղական խըն-
դիրների հետ, որդանական կապ ստեղծելով նկարի
բովանդակության և տեղական խնդիրների միջև Որի-
նակ՝ «Անապատի մարդարիտը» նկարը համապատաս-
խանում է մեր ամբողջ ջրտնցքային շինարարությանը
և վտարման աշխատանքներին, հետևապես նկարի
ցուցադրման սեկլամամ կարելի է յե գրել այսպես.
«Չրտնցքային շինարարությունը յերկրին տալիս է
անչափ հարստություն. այդ բանում համոզվելու հա-
մար անցիւր կինո, և նայիւր «Անապատի մարդարիտը»
և այն Ամեն մի աշխատող պիտի յելնի բերված որի-
նակներից և սեփական նախանձնությամբ կազմի
սփիշար-սեկլամամ նկարի բովանդակությանը և արծար-
ծվող խնդիրներին ու տվյալ վայրի յուրահատկու-
թյաններին համապատասխան:

Կինո լիազորը կամ կուլտ բանակայինը միաժա-
մանակ պետք է վաղորդը կոլխող քրիզադներում կազ-
մակերպի թուռցիկ զբույց՝ առաջիկա կինո սեանսի
մասին, անդամ հավաքի կոլտնտեսականների դիտո-
ղություններն ու տաշարկությունները ցուցադրում-
ների, մասսայական աշխատանքների մասին:

Նույն նպատակով տնայայման պետք է լայնորեն
ոգտադործել սաղիսն, սկուսքը, մոմուլը:

Այդ աշխատանքների միջոցին կինո աշխատողն
անմիջական շփման մեջ է մտնելու կենդանի մարդ-
կանց հետ, վորոնք իրենց պահանջներով, կուլտուրա-
կան մակարդակով, տնտեսական պայմաններով ու
կենցաղով մի խայտաբղետ պատկեր են ներկայաց-
նում Բնական և, նրանցից, յուրաքանչյուրը տարբեր
վերաբերմունք է ցուցաբերելու, ինչպես դեպի նկարը,

1926
A 3887

նույնպէս և դեպի մասսայական աշխատանքները: Մասսայական աշխատանքների հաջող վախճանը դրա համար ել կարգված է նաև առևտրատրիայի կազմից: Այդ իսկ պատճառով կինո աշխատողը պիտի խորը կնքուով ուսումնասիրի, ճանաչի ուղղիտորիան, կազմակերպութիւնների հետ մեկտեղ ստեղծի կազմակերպւած դիտողներէ առևտրորիա և մասսայական աշխատանքները ձևոնարկելիս հաշի տոնի դիտողներէ պատրաստականութեան միջին մակարդակը: Ռեկլամային գուշտնիաց անհրաժեշտ է կազմակերպել ֆիզուրային սլակատների, Փոստ նկարների ցուցահանդեսայնիք նկարի բովանդակութեանը պահանջում է, կարելի յն Փոստ նկարներ վերցնել նաև ամյալ կոլլապի կյանքից և դնել ցուցահանդեսում և այլն:

ՅՈՒՅԱՒԻՄԱՆ ՍԿԶՐԻՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո կարևորագույն նշանակութեան ունի սեանսից (ցուցադրումից) առաջ տարվելիք մասսայական աշխատանքները, վարի նպատակը պիտի լինի առաջին հերթին ոգնելու դիտողին յուրացնելու, հասկանալու նկարում շարափմոյ խնդիրները և նրանց լուծումը և ապա համապատասխան հետևութեաներ կատարելու Զ-րդ՝ նկարին համապատասխան նյութի լուսաբանմամբ մարիլիգացիայի յնթարկելի դիտողին, ամյալ վայրի հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրների շուրջը, բարձրացնել նրա ակադեմիայումն այդ խնդիրների լուծման գործում: Նկարի բովանդակութեանը դիտողին գյուրբորունելի դարձնելու վրա անհրաժեշտ է լուրջ ուղադրութեան դարձնել, վարով հետև անվարժ դիտողը, հաճախ, ի վիճակի չի հետևելու դեպքերի դարգացման ընթացքին, ըմբռնելու նկարի բովանդակութեանը:

Այժմ ասանք սրանից առաջ տարվող մասսայական աշխատանքների մի քանի ձևերը: Ամենապարզ և մասսայական գործադրում առաջած ձևը դա ցուցադրումից առաջ արվող համաստ զեկուցումն է կամ զրույցը (10—15 բույնից լճի ալիլ): Բնականորեն զեկուցման կամ զրույցի բովանդակութունը կաղմկույն ցուցադրվող նկարը և նրան համապատասխան տեղական փաստերի լուսարանումը: Կինո մասսայական աշխատանքների կաղմկերգման սկզբունքը պիտի լինի առաջին հերթին նկարի բովանդակութունը: Այնուհետև, յեթե նրա արտադր է, սրբանական ամբողջութուն ստեղծելու միջոցով լուսարանի տեղական փաստեր, յերևելքներ, ապա պիտի կատարել այդպիսի շաղկապում:

Ընդունենք, վոր ցուցադրվում է Շնաղ Փուշո նըկարը: Զեկուցողը պետք է համառոտ կերպով տա Պարսկաստանի դասակարգային հարաբերութունների պատկերը, խաղիւղների պայքարի ձևերը՝ առետրականների, մուլանների դեմ, կրոնական նախադաշարումների զեքն այդ պայքարում, առատկան և անգլխական իմպերիալիզմի մեքենայութունները Պարսկաստանի անդրութունից և հեռաձայնութունից ողբակու զորմում, աշխատավորությանը զահագործելու համար և այլն: Իրա հետ միասին զեկուցողը պիտի տա հեղափոխական մասսաների հաղթանակի նախապայմանը զահագործողների դեմ: Զեկուցումը հիմնականում պիտի հետապնդի դիտողին տալու պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության պայքարի միասնական նպատակը, նրա արմատները և կենտարքման ուղիները:

Բացատրական աշխատանքն այդպիսով պետք է բղիտի նախ և առաջ նկարի բովանդակութունից, լուսարանի նկարում արծարծվող հանգուցային խնդիրները և սերտորեն զաղկապելով պրոլետարիատի դասակար-

դասին պայքաբի նպատակներին, մասսաներին մորիվ-
զացիայի յենթարկի այդ խնդիրներէ կենսադործման
շուրջը:

Որինակ, սոցիալիզմի շինարարութեան, յերկրի
ինդուստրացման, գյուղի կուլիկալիվացման վերաբերյալ
նկարների բացատրականը պետք է կատարվի այնպես,
վոր կարողանա բարձրացնել մասսաների դասակարգա-
յին զգոնութունը, աշխատանքային խանդավառութուն-
ը, հանրային գույքի պաշտպանման, աշխատանքի կաղ-
մա կերպովածութեան, արտադրողականութեան բարձրաց-
ման, նոր տեխնիկայի յուրացման, կուլիկային տարրերի
և նրանց վնասարարական գործունեյութունը ջանջա-
խելու, կարճ ասած—անդասակարգ սոցիալիստական
հասարակարգ կառուցելու շուրջը:

Նկարի շուրջը ցուցադրման սկզբին կազմակերպ-
վող ժամանակն աշխատանքները չեն սպառվում զե-
կուցումներով և զրույցներով: Յեկնելով նկարի բովան-
դակութունից և դիտողների զարգացման մակարդակից,
միանգամայն անհրաժեշտ է կազմակերպել քաղ-մարտ,
ազրոմարտ, վիկտորինա, ցուցահանդես, թուրքիկ մի-
տինգներ և այլն, լայնորեն ոգտագործելով տվյալ դյու-
ղի, շրջանի կյանքից վերցրած մատերիալները:

Որինակ՝ «Ջամալլու», «Ազդանշանը ջրվիժի մոտ»
և այլ հեղափոխական-պատմական նկարների շուրջը
կարելի յե կազմակերպել քաղ-մարտ՝ լուսարանելու
նկարում շոշափված գեպքերը, Հայաստանի հեղափոխա-
կան շարժման ետապները, տվյալ շրջանում, գյուղում
տեղի ունեցած դասակարգային կռիւի ձևերն ու ետապ-
ները և այլն: Առաջարկվող հարցերը պիտի լինեն պարզ
ու դյուրամբուներ:

Յեթե ցուցադրվում է տնտեսութեան այս կամ
այն ճյուղի վերակառուցմանը վերաբերվող նկար, ան-

հրաժեշտ և այդ դեպքում կազմակերպել տեխնիկական մարտ, լուսաբանել տնտեսական, տեխնիկական վերակառուցման խնդիրներն ու ուղիները, կուսակցությունն աջակցող տնտեսություն տեխնիկական վերակառուցման համար, տեխնիկային տիրապետելու կարևորությունը, այդ աշխատանքների զրկածքը տվյալ ձեռնարկում, դյուզում, կոլխոզում և այլն:

Քաղաքում ղեկավարելու զործը բազմազանին պատասխանատու և զօժուրին խնդիր և Այդ իսկ պատճառով անհրաժեշտ և այդ զործը վաղորդք հանձնաբարել պատրաստված ընկերոջ: Սեանսի սկզբում կազմակերպվելու պիտի մի քանի բազմազան հակիրճ հարցերի նկարի բովանդակությունը և նրա նշանակությունը, վերջից հետո նա հանդիսականներին առաջարկում է նախապես մշակված մի շարք հարցեր, ըզխնցրած նկարի բովանդակությունից, տվյալ վայրի պրակտիկայից և այլն:

Որինակ՝ գաշտավարություն վերաբերվող նկարի շուրջը կախիլի յե, առաջ այսպիսի հարց.— «Ընչպիսի միջոցառումներ են հարկավոր բերքատվությունը բարձրացնելու համար: Կորոնք են ընկ. ՅԱԿՈՎԼԵՎԻ կողմից առաջադրված բերքատվության բարձրացման 5 նախադրամանները»: Ընչպիսի կարելի չե ունենվոր դարձնել կոլտնտեսականներին»: Բուրք պատասխանները համառոտակի զրի յեն առնվում: Գրվում է նաև պատասխանողի ազգանունը: Սեանսի վերջում 10—15 րոպեյում ամփոփվում է քաղաքի արդյունքները, նշում են ճիշտ պատասխանները և ապա համառոտակի տալիս տվյալ գյուղում, կոլխոզում տարվելիք աշխատանքների պատկերը: Ծիշտ պատասխանող ընկերներն ստանում են համապատասխան նվերներ—գերազանցապես գրականություն:

Սեանսի սկզբին քարվոր մասսայական աշխատանքների ամենազբաղիչ և արդյունավետ ձևը՝ ցուցահանդեսն է: Ծուցահանդեսի ներգրծուածութունը դիտողի վրա հասնեմատաբար ավելի զորեղ է, բաշմաշողմանի: Ծուցահանդեսի նպատակը պիտի լինի ծանոթացնել մասսային տվյալ ռայոնի, գյուղի և քրեք բնրան նման ճումներին՝ սոցիալիստական շինարարության պանազան բնագավառներում: Ծուցահանդեսի միջոցով անպայման պետք է լուսաբանվի տվյալ վայրի աշխատանքների թերութունները, աշխատանքների կարգավորումն ավելի և ավելի, սոցմրցակցության և հարվածայնության վիճակը, հանրային դուքի պաշտպանության կերտաները, նրա թշնամիները և այլն: Ծուցահանդեսի համար նյութ կարող է ծառայել նաև յերկու արտանմաների անտեսական-քաղաքական կյանքին վերաբերվող տվյալները համեմատումը՝ պրակտային դիտողամաների ձևով և այլն:

Ծուցահանդեսի կազմակերպման դեպքում անպայման անհրաժեշտ է լուսաբանել տվյալ վայրի, շրջանի տնտեսական-քաղաքական, կուլտուրական պատկերը նախահոգախոհական շրջանում, վորովհետև այդպիսի համալրութուններն ավելի արտահայտիչ են դարձնում մեր հաջողութունները: Ծուցահանդեսը կազմակերպելիս անհրաժեշտ է նրան այնպիսի ձև առել, վոր հնարավոր լինի սգտագործել շրջիկի միջոցով:

Ծուցահանդեսն անհրաժեշտ է բաժանել յերեք մասի. որինակ՝ Հայաստանի լսորհրդայնացման առթիվ կազմակերպվելիք ցուցահանդեսը կարելի յե կազմակերպել հետևյալ սխեմայով.— 1. Հայաստանը մինչև Նոյեմբերյան հեղափոխութունը, 2. Հայաստանը սրբութեարական դիկտատուրայի որոք—մինչև ցուցահանդեսի որը, 3. սոցիալիստական շինարարության առա-

Չիկա խնդիրները: Այդ բաժիններն անհրաժեշտ է վերանայ մտալորական հետեյալ յենթաբաժինները.—

1. Արդյունաբերություն, 2. գյուղատնտեսություն (նաև անասնապահություն), 3. կուլտուրա, կենցաղ և այլն: Արանք իրենց հնրիքն կաշեի յե Տյուրավորնէլ այսպէս՝ 1) արդյունաբերություն—ա) ծանր արդյունաբերություն, բ) ելեկտրիֆիկացիա, գ) թեթև արդյունաբերություն և այլն: Մտցչինարարության աստիճան խնդիրները բաժնում անհրաժեշտ է լայն չափով սպասարկել անդանիան կոնկրետ մտերիւլը:

Այդ նպատակով ապրիս ենք հետեյալ սխեման.—

Հ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ի Ս. Խ. Հ.

1-ին Բ Ա ժ Ի Ն:—Այսպիսիք եր ցարի յեվ դատեակմերի սոփ:

1. ԱՐԴԹՈՒՆԱԲԵՐՈՒԹԹՈՒՆԸ.

ա) ծանր արդյունաբերություն (աղնձարդյունաբերություն, այսքան արտադրանք, հետամնաց տեխնիկա, մեքենաշինություն չկար):

բ) ելեկտրիֆիկացիա—գրեթե չկար:

գ) թեթև արդյունաբերություն—մի քանի արհեստագործական ձեռնարկներ, վորոնք դարարել եյին գործելուց՝ սոցալմիջյան կոիլները հետևանքով:

դ) արանսարար՝ քայքայված (բանվորները թիվը):

2. Գ Ր Ո Ւ Ղ Ա Տ Ն Տ Ն Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն.— (արտա-

դրանքը—ցանքերը տարածությունը, անասնապահությունը, տեխնիկական կուլտուրաները, արտադրության միջոցները, հողային հարաբերությունները, գյուղի դասակարգային դեմքը:

3. ԿՈՒՆՏՈՒՐԱ ՅԵՎ ԿԵՆՑԱՂ.

Անգրագետ մասսաներ, վորոնք գտնվում էին կուլակներին, տերտերներին լծի տակ, (դպրոցների քանակը, աշխատանքի տեղումը, ցածր աշխատավարձ, հիվանդանոցներ, համալսարան, թատրոն, կինո, սադիո, ընտանեկանային պայմաններ և այլն):

2-րդ Բ Ա Ժ Ի Ն

ԲՈՒՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒՄ, ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 13 ՏԱՐՈՒՄ ՓՈՒԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

1. Կիսադադուլթից Հայաստանը դարձել է ինդուստրիալ-ադրալային յնքկիր. (թվեր արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշռի մասին—ամբողջ տնտեսության արտադրանքի մեջ).

ա) ծանր արդյունաբերություն (նոր գործարաններ և նրանց ծավալը).

բ) հլեկարիֆիկացիա (կայաններին թիվը, կարողությունը).

գ) թեթև արդյունաբերություն (գործարանների թիվը, տեսակները, ծավալը):

դ) արանսպորտ (նորակառույցներ, նաև խճուղիներ, ավտոմոտորիզացիա).

ե) բանվոր դասակարգի աճը (թիվը):

2. ԳՆՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

ա) հողային հարցի լուծումը

բ) ցանքերի տարածություն և բերքատվության աճումն ըստ կուլտուրաների (թվեր).

գ) դյուզի ինդուստրացումը և սոցիալիստական վերակառուցումը (թվեր ՄՏԿ, խորհանստեսություններին)

սրանց կարողութիւնը, կոլտնտեսութեան ամբողջական և կուլտիւլացիան լիկվիդացիայի մասին)։

դ) կոլտնտեսականի յեկամտի աճումը (թվեր)։

Յ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՃՈՒՄ Ե ՁԵՎՈՎ ԱԶԳԱՅԻՆ, ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅԱՄԲ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՆ.

ա) դրազիտութեան տեղադր.

բ) տարրական և միջնակարգ դպրոցների թիվը.

դ) ինտսիտետները պատրաստում են սոցիալիզմի կազմակերպիչ կադրեր (թվեր).

դ) ուղիտ, կինո, թատրոն (ձեռնարկների թիվը).

ե) մամուլ և գրականութուն (գրքերի և լրագրների տիրաժը, թիվը, աճումը).

զ) ասոզիացիանութուն (հիմնադրանոց, մասը, կուրորտ, հանգստյան առևն և այլն).

է) բնակ. շինարարութուն.

ը) աշխատավարձի աճման դիտարկման (թվեր)։

Յուցահանգեսը կազմակերպողը պետք է ամեն կերպ խուսափի ավյալները սոսկ թվերով լուսաբանելուց։ Անհրաժեշտ է գերակշռութուն տալ առանձնապես ջուցահանգեսի ավյալների պատկերային ձևին, լայն սոցտագործել և քաղոնատների, մոդելների յեղանակը, վորոնք ավելի արտահայտիչ ու գրավիչ են դարձնում ջուցահանգեսը։ Անհրաժեշտ է միտժամանակ յուրաքանչյուր բաժնում դետեզել բնկ. ԼԵՆԻՆԻ, ՄՏԱԼԻՆԻ, Կ. ՄԱՐՔՍԻ աշխատութուններից, XVII համագումարի վորոշումներից վերցրած համապատասխան քաղվածքների, լողունգներ։ Յուցահանգեսին պետք է այնպիսի գասավորութուն տալ, վոր նա ավելի արտահայտիչ լինի, վոր հեշտ լինի հնի և նորի համեմատութունը և այլն։ Այնուհետև անհրաժեշտ է առանձնացնել հատուկ հերթապահ բնկեր, վորը պիտի տանի բացատրա-

կան աշխատանք, կազմակերպիլի դրույց և պատասխանի
ցուցահանդեսին վերաբերվող զանազան հարցերին և
այլն: Անկասկած գյուղական աշխատողները կամ կինս
մեխանիկը ի վիճակի չեն լինի այդ ձևի և ծավալի
ցուցահանդես կազմակերպելու, թեկուզ հենց նրա հա-
մար, վոր ամեն մի գյուղում դժվար և ճարել նկարիչ,
չեն լինի համապատասխան ավյալներ և այլն: Այս բա-
նից յեղնելով, նման աշխատանք պիտի կատարի բա-
ժանմունքի կուլտ աշխատողը, կամ շրջ ընդայի վա-
րիչը: Նրանք համապատասխան ավյալներ կամ ստա-
նուկ են մեղանից, կամ վերցնում են շրջգործկոմից և
համապատասխան ուժերի միջոցով սկսում են ցուցա-
հանդեսի ձևավորման աշխատանքները: Բոլոր պլակատ-
ները, եքսպոնատները, լողունդները և այլն պիտի այն-
պիսի ձև ու ծավալ ունենան, վոր հնարավոր լինի մի
վայրից մի ուրիշ վայր փոխադրելու: Բազմակողմանի
ցուցահանդեսների կազմակերպումը սովորաբար կատար-
վում է նշանավոր տոների կազակցությամբ: Այդ ձևի
մաստայական աշխատանք պիտի անսպաժման կատարեն
քաղաքային ստացիոնար կիւնտները, իսկ ուկումբներն
ու գյուղիքը կարող են կազմակերպել համամատաքար
փոքր ծավալի ցուցահանդես, վորը զերազանցապես
լուսաբանում և ավյալ գյուղի, կամ ձեռնարկի նվա-
ճումներն ու թերությունները:

ԿԻՆՈ ՍԵԱՆՍԻ ՄԻՋՈՏԻՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կինո սեանսի միջոցին տարվելիք մաստայական
աշխատանքը վոչ միայն լրացնում և ցուցադրման
սկզբին տարած աշխատանքները, այլև նկարում շոշափ-
ված խողիբներն ավելի հասկանալի դարձնելու, նրա
ներգործությունն ավելի ազդու և խորը դարձնելու:

կարևոր միջոցն եւ Բացատրական-մասնայական աշխատանքը տվյալ դեպքում ամբողջութեամբ պետք եւ բղխեցուցադրվող նկարի բովանդակութեանն ից:

Կինո աշխատողը կամ բացատրական աշխատանքի համար առանձնացված ընկերը, նախորոք պիտի ուշադրութեամբ դիտի նկարը, կամ կադմէտը լիբրետտոյի միջոցով մանրամասն ծանոթանա նկարի բովանդակութեան հետ, այլապէս միանգամայն հակառակ արդյունք կտա այնպիսի բացատրութեանը, վորք տրվում եւ սուանց նախնական դիտումի:

Սկանսի միջոցին տարվելիք աշխատանքներն ամենամասնայականացված ձևը՝ դա մակագրութեանն ներքի ընթերցումն ու մեկնաբանումն եւ Բայց այդ ձևն իր ազդեցութեամբ չափազանց աննշան եւ Այդ իսկ պատճառով, դրա հետ միասին, անպայման անհրաժեշտ եւ ցուցադրմանը դուրընթաց տալ նաև համառոտակերպատրական՝ նկարի բովանդակութեան շուրջը: Բնականորեն բացատրականի բնույթը, շրջանակը պետք եւ բղխեցնել գիտողների, դարգացման ընդհանուր մակարդակից: Որինակ՝ յիթե հանդիսականները գերազանցապէս բովանդանալուի հասունացած ինտելիգենտ մարդիկ են, ապա նրանց համար այդպիսի բացատրութեանը միանգամայն ավելորդ եւ ձանձրալի, այդպիսի դեպքում կարելի չե հրաժարվել բացատրութեանն ից:

Պատմական, դիտական, տեխնիկական եւ մասնագիտական նկարներն անպայման անհրաժեշտ եւ զուգակցել կինո-դաստիստութեամբ: Այդպիսի դեպքում նկարի ցուցադրումն ամբողջապէս պետք եւ յենթարկված լինի դեկուցման պլանին, վորպէս ոժանդակ նյութ եւ ցուցադրվի դեկուցման պահանջին համապատասխան:

Այդ աշխատանքների մեջ անհրաժեշտ եւ լայնորեն ներգրավել տվյալ շրջանի, գյուղի ուսուցչութեանը,

գյուղատնտեսին, բժշկին, տեխնիկին և մյուս կարևոր
ուժերին: Ինչպես կինո աշխատողները, նույնպես և
զրջանի կուսակցական-խորհրդային. կազմակերպու-
թյունները պետք է աշխատեն շրջիկ կինոյի հետ ուղար-
կել նաև համապատասխան ուժ՝ կինո մասսայական
աշխատանքների—գեկուցումների համար:

Լ ՈՒ Ս Ա Յ Ե Ր Յ

Կինո մասսայական աշխատանքներում առանձ-
նակի կարևոր տեղ է գրավում լուսաթերթը: Լուսա-
թերթի միջոցով չափազանց հեշտանում և նկարի բո-
վանդակութունը շաղկապել տվյալ գյուղի, ձևանարկի
աշխատանքների դրվածքի հետ, պատկերավոր կերպով
և քաղմակողմանիորեն լուսարանել տեղական խնդր-
ները, հետևաբար աշխատավորության զգոնությունն
ույնտանող մորիլիզացիայի յնթարկել որվա հրատապ
խնդիրների շուրջը, խարազանել, մերկացնել դասա-
կարգային թշնամուն և նրա դործակալներին:

Ինչպես և կազմակերպում այդ աշխատանքը:
Տվյալ գյուղի կուլտ բանակայինները—լիազորները,
նախորոք ծանոթանալով առաջիկայում ցուցադրվող
նկարի բովանդակությանը, հավաքում են նույնանման
նյութեր և լողուններ, դիագրամների, նկարների, մա-
կագրությունների և կարիկատուրանների ձև տալով,
խնամքով գրում են փչացած պլյոնկայի վրա և վորպես
լրագիր ցուցադրում, կամ կինոյի սկզբին, կամ վերջում.
ցանկալի յև վերջում, վորպեսզի շաղկապումն ավելի
արդյունավետ լինի:

Ընդունենք, վոր նկարը ցույց է տալիս բամբակի
հավաքի աշխատանքները: Այդ դեպքում լուսաթերթը
պետք է սկսել այսպես.—«Մենք տեսնք, թե ինչպես

պետք և պայքարել բամբակի բերքը հավաքելու համար։ Այժմ տեսնենք թե մեր կոլխոզն ինչպես և կատարում այդ աշխատանքը և ով ինչպես և պայքարում բամբակի հաջող բերքահավաքի համար։ Ովքեր են, վոր խանդարում են բամբակի հավաքը և այլն։ Մասնաշահուն աշխատանքի այս ձևի գործադրումը կատարվել և Ուրալում և ուրիշ վայրերում և փայլուն արդյունքներ և տվել։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ և լայնորեն ողտվել նաև այդ ձևից։ Այդ ձևի կենսագործումը պիտի ձևոնարկեն շրջանային կինո ընդհանրը, ոգոտագործելով շրջ. լրագրի, հողբամնի տվյալները։ Կազմված լուսաթերթը շրջիկի հետ ուղարկվում և գյուղերը։ Այդպիսի դեպքում լուսաթերթի միջոցով լուսարանվում են վոչ միայն մեկ գյուղի, այլ ամբողջ շրջանի աշխատանքների պատկերը։ Դա մի կարևոր միջոց և գրական փորձի փոխանակման համար։

ՍԵԱՆՍԻՑ ԶԵՏՈՒ ՏԱՐՎԵԼԻՔ ԿԻՆՈՒՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Զբույցների, դասախոսությունների և քաղմաշտերի կազմակերպումով, մենք հանդիսատեսի մեջ միաժամանակ առաջացնում ենք մի շարք հարցեր, թե ընդհանուր բնույթի և թե իր շրջապատին վերաբերվող առարկա խնդիրների շուրջը։ Բնական և, վոր նա անպայման պիտի շահագրգռվի, պարզելու առաջադրված խնդիրների նշտությունը, ստանալու ճիշտ պատասխան իրեն հուզող հարցերին, ստանալու իր վաղվա անելիքներին մասին հստակ և գործնական ցուցմունքներ։ Կինո-դաշտի արակազակա-սրոպագանդիստական աշխատանքներն ավելի գորեղ ներգործություն կունենան, հանդիսատեսին ավելի կհամախմբեն պրակտիկ խնդիր-

ների կենսագործման շուրջը միայն այն դեպքում,
յերբ հանրագումարի բերվեն սեանսի սկզբին և միջո-
ցին կատարված մասսայական աշխատանքները, յեթե
այդ աշխատանքները կխորացվեն սեանսի վերջում
կազմակերպվելիք մի շարք մասսայական-դաստիարակ-
չական աշխատանքներով: Սեանսի վերջում ձեռնարկ-
վելիք աշխատանքները միաժամանակ պիտի նպատակ
ունենան կազմակերպելու հանդիսատեսի ակտիվ վերա-
բերմունքը՝ հանդես կինո նկարի, Հանդես բերելով
դիտող հասարակության ակտիվ վերաբերմունքը ցու-
ցադրվող նկարի շուրջը և լրջորեն հաշվի առնելով
նրանց դիտողութունները, կինո մասսավիկը դրանով
խսկ հնարավորութուն կունենա պարզելու հասարա-
կության կուլտուրական մակարդակը, նրա պահանջ-
ները, նրանցում յեղած տրամադրութունները, հուզող
հորցները և այլն, հետագայում ավելի նպատակահար-
մար ձևով կազմակերպելու իր աշխատանքները, մաս-
սայի կուլտուրական պահանջներին ավելի համապա-
տասխանող ռեպերտուար կազմելու:

Այժմ քննենք այդ աշխատանքների կազմակերպ-
ման մի քանի ձևերն ու նրանց բովանդակութունը
Սեանսի սկզբին կազմակերպվող քաղմարտերը և
վիկտորիաները բնականորեն հանդիսատեսի ուշադրու-
թյունն այս կամ այն չափով բևեռում են նկարում
չոչափվող խնդիրների վրա: Այդ լարվածութունը պահ-
պանելու և ապա սեանսի վերջում կազմակերպվող աշ-
խատանքներին ակտիվ մասնակից դարձնելու համար,
անհրաժեշտ և առաջադրված հարցերին տրված պատաս-
խանների ճշտութունը լուսաբանել սեանսի վերջում,
միաժամանակ դնելով հանդիսատեսների քննադատու-
թյանը ցուցադրված նկարը: Այդ աշխատանքների դե-
կավարութունը պետք և կատարի պատրաստված ըն-

կեր, (անապայման պետք և ղեկավարի այն ընկերը, ով սկզբին տարել և մասսայական աշխատանքներն ղեկավարութիւնը): Քննադատութիւնը պետք է սկսել պարզ զրույցի ձևով և ղեկավարը պետք է անապայման զրույցը և յետագային տանի վերոշուկով, լուծելու ատաղաղութան խնդիրները, շաղկապի տեղի խընդիրներին հետ և լայնորեն լուսարանի տեղական փաստերը, խի վերջում ղեկավարը պետք է ամփոփի և յետագայութեան հանի:

Զրույցի կամ ղեկավարի միջոցին անխուսափելիորեն կատաղանան այնպիսի հարցեր, վերոնց պատասխանը կարող և ղեկավարը չգիտենալ: Այդպիսի դեպքերում նա պարտավոր և հարցի պատասխանը հետաձգել: Հաճախ վերոշուկով ղեկերն են այսպես.— արատախանիք մտահոսներ, թեկուզ՝ սխալ, վոր հեղինակութիւնը չընկնի: Այն դեպքում, յերբ քննադատութիւնը կազմակերպուի և ատոնց նախնական հարցերի արտադրանք, ղեկավարը պարտավոր և նկարի հանդուցային խնդիրներին շուրջը ներածական խոսք տան, այդ խնդիրները սերտորեն շաղկապելով տեղական հարցերի հետ: Ներածականից հետո արդեն սկսուի և հանդիսատեսներին յետագային ղեկարի շուրջը: Չափազանց ցանկալի և նպատակահարմար և քննադատութիւնը կազմակերպել սեռնախց անմիջապես հետո, վորովհետեւ այդ միջոցին, ինչպես սեռնախ սկզբում արտադրութեան խնդիրները, նույնպես և նկարի թողած աղափորութիւնները դեռ ևս թարմ են հանդիսատեսներին և ղեկներում:

Քննադատութեան միջոցին անկասկած հաղաքովելու յեն մի շարք արժեքավոր նյութեր, դիտողութիւններ և արտադրողներ ինչպես նկարի, նույնպես և ամբողջ վայրի համապատասխան խնդիրներին մասին:

Միտնդամայն անհրաժեշտ և վոչ միայն սահմանափակվել այդ բոլորն ի մի ամփոփելով վերջին խոսքում, այլև համապատասխան գործնական աշխատանք ծավալել դիտողությունները և առաջարկները կենսագործելու ուղղությամբ: Զրույցի ղեկավարը, մասսավիկը պարտավոր և հանդիսատեսների հետ միասին այդ բոլորը ձևակերպել և հանձնարարել համապատասխան կազմակերպություններին կատարելու: Չափազանց նպատակահարմար և հինց նույն միջոցին աշխատանքներն այնպես կազմակերպել, վոր ինչպես առանձին աշխատողները, նույնպես և կոլտնտեսային, խորհրդատեսային առանձին բրիգադները, կամ սղակները, վերջում կոնկրետ պարտականություն ստանձնեն իրենց աշխատանքները վերաբերյալ, վորպեսին պետք և ձևակերպել իբրև սոցմրցման սլաշմանագիր, վորի կիրառման վրա հսկում և կոլտնտեսության դիրեկցիան կամ այլ կազմակերպություն:

Հնարավոր և նաև կազմակերպել կուլեկտիվ ուցենդիա: Տվյալ դեպքում աշխատանքները պետք և տարվին նկարը բազմակողմանիորեն վերլուծելու, նրա դադափարական կողմը կուսակցականորեն ճիշտ գնահատելու ուղղությամբ: Մասսայական աշխատանքները ղեկավարողի անմիջական խնդիրը տվյալ դեպքում պետք և լինի ռժանդակել հանդիսատեսին ըմբռնելու կինո մատերիալի հանդուցային խնդիրները, լրիվ և ամբողջական դադափար կազմելու ցուցադրվող նկարի մասին: Դրա համար նա պարտավոր և ցուցադրման սկզբին 10—15 բոսլեյով ներածական խոսք ասել նկարի հանդուցային խնդիրների շուրջը և տպա առաջադրել մի քանի հիմնական հարցեր, վորոնց շուրջը պետք և արտահայտվեն հանդիսատեսները: Սեանսից հետո անպայման պետք և բացել մտքերի փոխանակություն:

Դարեւոթ և հաշվի առնել, ինչ նոր բան տվեց նկարը
 դիտողին, ինչը դուր յեկավ նրան տվյալ նկարոււմ: Այդ
 բոլորից հետո դեկավարն ի մի յե ամփոփոււմ արտա-
 հայտված կարծիքները, զբանցոււմ դիտողությունները:
 Այդ տեսակետից նկարի այդորինակ կոլեկտիվ զնա-
 հասոււմը խոշոր ոժանդակությունն ցույց կտա կինո
 տրատադրությանը: Ինչպես կինոյի, նույնպես և տվյալ
 ձեւնարկի, դրուդի, կուլանտեսության աշխատանքների
 մասին արված դիտողությունները կենսագործման,
 նրան տված ոգոււտները մասին, անպայման կինո մաս-
 սայական աշխատողը պարտաւոր և այս կամ այն ձեւով
 տեղյակ պահել հանդիսատեսներին, հաշվետու դառնալ
 դիտողների առաջ: Չափադանց անհրաժեշտ և կինո
 մասսայական աշխատանքներու ողտագործել մասոււլը:
 Կատարված և կատարվելիք մասսայական աշխատանք-
 ները մասին անհրաժեշտ և հաճախակի հոդվածներ,
 լրագրական իմֆորմացիաներ ապագրել տեղական մա-
 սոււլոււմ: Կոլեկտիվ ռեցենդիան, վորպես կազմակերպ-
 ված հասարակական կարծիք, նույնպես պետք և տպա-
 ցրել տեղական լրագրոււմ: Միաժամանակ անհրաժեշտ
 և լրագրի միջոցով հաշիվ տալ հասարակայնությանը՝
 արված ատաշարկները կենսագործման մասին: Հաշի-
 տվության այդ ձեւը բնականորեն մեծ ակտիվություն
 կատաշացնի հանդիսականի մեջ: Յեթե նա տեսնոււմ և,
 վոր իր ատաշարկներին մոտենոււմ են խնամքով և չեն
 թողնոււմ անհետեւանք, ապա նա մյուս անգամ ավելի
 ակաիվ մասնակցություն կունենա նկարների քննարկ-
 մանը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԳԻՏՈՂԻՆ

Կինո աշխատանքների վորակի ցածրությունը
 պիտի բացատրել նաև նրանով, վոր դեռևս մեզ մոտ
 չի ստեղծված կազմակերպված հասարակայնություն

կինոյի շուրջը: Մենք մինչև հիմա կանոնավոր չենք դրադվել դիտողի ուսումնասիրութեամբ, նրա դիտողութեանն երի, կարծիքներն և զեղարվեստական պահանջներն հաշվառման խնդիրներով: Իսկ այդ հաշվառումը կարևորագույն նշանակութուն ունի միայն կինոսպասարկման կարգավորման, այլ և կինո արտադրութեան համար: Այդ դիտողութեանն երի, առաջարկներն միջոցով անպայման կինոստեղծագործական պերսոնալը հնարավորութուն կունենա մտակիր ծանոթանալ դիտող հասարակութեան զեղարվեստական պահանջներին և դրան համապատասխան արտադրանք կտա: Անկապած դիտողի ուսումնասիրութեան ուղղութեամբ նշված կինո մասսայական աշխատանքները բավականին հարուստ նյութ կարող են տալ, բայց դա ամենևին չի նշանակում, մեր կինո մասսադիկը հատկապես չպիտի դրադվի դիտողի բացմակողմանի ուսումնասիրութեան խնդրով և միայն պիտի բավականանա դիտողական երի, դասախոսութեանն երի, ցող մարտերի տված նյութներով: Մենք պիտի լրջորեն ուսումնասիրենք դիտող հասարակութունը, հաշվի առնենք նրա պահանջները և այլն:

Դիտողի ուսումնասիրութեան մի քանի ձևեր գոյութուն ունի: Ամենանպատակահարմար ձևերից մեկը դա՝ անկետային ուսումնասիրութեանն և: Անկետայի միջոցով կարելի չէ մեծ թվով մարդ ընդգրկել և ստացված նյութերը հեշտ և մի հայաբարբի բերել: Իրա համար անկետան պիտի գրվի կարճ, հասկանալի, հարցերը պիտի դնել այնպես, մեր լրացնողը կարողանա մի քանի խոսքով պատասխանել: Պետք է անկետան բաժանել ձրի և ամբողջ ատդիտորիային: Այդ մասսայական աշխատողը սկանսի սկզբին բացատրի անկետայի նպատակը և կոչ անի տեղիով մասնակցելու աշխատանքներին:

Անկետան պիտի կազմված լինի մոտավորապես
հետևել հարցերով.—

1. սղղանուն, անուն.

2. հասակը.

3. սոցիալական դրությունը (բանվոր, կուտնան-
սական, ծառայող, մենատնտես, այլք, և այլն—ընդգծել).

4. մասնագիտություն.

5. կրթություն.

6. ի՞նչ նկարներ և դիտել առաջներում.

7. ի՞նչ թիրություններ ևք դիտել տվյալ նկարում.

8. ձեր կարծիքը ցուցադրման պրոցեսի մասին.

9. ձեր ցանկությունները՝

ա) նկարի մասին.

բ) ցուցադրման մասին.

գ) քաղուստչիտատանքի մասին:

2-րդ և արժեքավոր ձևը դիտողի անհատական
ուսումնասիրության բնագավառում հանդիսանում և
«գիտողների գիրքը» կամ «դիտողների դնահատական-
ների գիրքը»-ը: Այս ձևը, չնայած հասարակ և, ուրեմն՝
գործադրելի բոլոր կի՛նոներում, բայց ավելի որոշակա-
վորեն և զբսեղորում դիտողի վերաբերմունքը դեպի
նկարը, կամ կի՛նո մասսայական աշխատանքը: Դրա
համար հարկավոր է աչքի ընկնող անգում դնել մի
ընդհանուր սեպ, մատիտ և համապատասխան լոզուն-
գով հրավիրել դիտողին գրի առնելու իր տպավորու-
թյուններն ու առաջարկությունները նկարի մասին:
«Դիտողի գիրքը»ը իր շտափելի արդյունքները կտա
միայն այն ժամանակ, յերբ կի՛նո կազմակերպություն-
ները զոչ միայն հաշվի յեն առնում բոլոր արժեքավոր
դիտողությունները, այլ և այն ժամանակ, յնրբ գործի
կվերածվեն այդ առաջարկները և դիտողությունները:
Այդ ձևն ավելի արդյունավետ դարձնելու համար, հար-

կալոք և ինֆորմացիա տալ դիտողներին՝ առաջարկու-
թյուններն կենսագործման ընթացքի մասին:

Այնուհետև հարկավոր և կինոներում ունենալ
դիտողությունների ու առաջարկությունների հատուկ
արկղներ, առաջինը՝ նկարը հավանողների և Զ-րդը՝
չհավանողների համար — համապատասխան մակագրու-
թյամբ:

Դիտողի ուսումնասիրության կարևորագույն մի-
ջոց և սլափ լրագիրը: Լրագրի միջոցով անհրաժեշտ և
լուսաբանել «դիտողի գրքի» առաջարկները, նրանց
կենսագործման արդյունքները, առանձին ունեցնչի-
ներ և այլն: Պատի լրագիրը միաժամանակ հնարավոր
ություն և ընձեռում խորհրդային հասարակայնու-
թյուն ստեղծելու կինոյի շուրջը և ստեղծելու մշտական
ակտիվ:

Բացի նշված ձևերից գոյություն ունի մի շարք
այլ ձևեր ևս. վերջում կանգ առնենք դիտողների կոն-
ֆերանսների վրա և վերջացնենք:

Դիտող հասարակության կուլեկտիվ ուսումնասիր-
ման ամենակարևոր միջոցը — դա դիտողների կոնֆե-
րանսների կազմակերպումն է: Դիտողների կոնֆերանս-
ներում անհրաժեշտ և քննության առարկա դարձնել
վոչ միայն առանձին կինո նկարներ, այլ և մի շարք
ընդհանուր կարգի խնդիրներ, ինչպիսիք են՝ սցենա-
րիստների քննարկումը, կինո խրոնիկայի հերթական
խնդիրները, թեմատիկ պլանը, կինո-աշխատողի հաշ-
վետու զեկուցումը, կինո մասսայական աշխատանք-
ների խնդիրները և այլն:

Կասկած չի կարող լինել, վոր այդ բոլոր աշխա-
տանքները հաջողությամբ, առանց քաղաքական սխալ-
ների հատարելու համար, պետք և շրջանային կուսակ-
ցական, կոմյունիստական կազմակերպությունները, Մ.Տ. 4

քաղաքաժիններն ամենաազատիվ և ամիջական մասնակցութեանն ունենան, դեռ ավելին, անմիջականորեն զիկավարեն այդ աշխատանքները: Նշված կինո մասնաշաղկան աշխատանքներէ բոլոր ձևերը հնարավոր չե, ի հարկե, լրիվ չափով կիրառել թե գյուղում և թե քաղաքում: Պետք և շեշտել, վոր մասնաշաղկան աշխատանքի այս կամ այն ձևերի կիրառումը նախ և առաջ կախված է այն բանից, թե ինչպիսի ուժեր ունի տվյալ վայրը, ապա՝ ինչպիսի դարդացման մակարդակ ունի հանդիսատեսը և այլն: Դրա համար ել մասնաշաղկան աշխատանքի այս կամ այն ձևի բնորութեանը, վորը պիտի բղխի նկարի բովանդակութեանից, թողնում ենք մասնաշաղկան աշխատողի հայեցողութեանը: Դրա հետ միատին պետք և շեշտենք, վոր նկարի բովանդակութեան համառոտակի լուսաբանումը, մակադրութեանների ընթերցումը, անհատական, խմբակային սոցիալական, թեթև խնդիրների շուրջը քաղ-մարտի, յիկտորինայի կողմակերպումը—սեանսի վերջում տպավորութեանների հաշվառումը և այլն հնարավոր և անհրաժեշտ և կենսապարծել գերադանցապես գյուղում և բանվորական ակումբներում: Միանգամայն հնարավոր և այդ վայրերում կենսապարծել նաև դիտողների ուսումնասիրութեան բոլոր ձևերը:

Քաղաքային կինոներում պետք է խուսափել բովանդակութեան բացատրութեանից, լայնորեն կիրառել դասախոսութեանների, դիսպուտների, կուլեկտիվ սեյնսիանների, ծաղալուն ցուցահանդեսների սխառմը և այլն: Այս բոլորն ամենևին չի նշանակում, վոր գյուղում պիտի հրաժարվել, ասենք, դասախոսութեանների ձևից: Ընդհակառակը, դիտական և ազրոտեխնիկական նկարները պիտի շրջապատվեն դասախոսութեամբ: Մի քանի խոսք հատկապես կոմյերիտիութեան մասնակ-

ցության մասին: Հայտնի յն, վոր կոմսերիտմիությունը կուտուրական հեղափոխության առաջամարտիկն է: Այդ իսկ աշտոնառով նա սլիտի լինի կինո մասսայական աշխատողի առաջին շարքերում: Հենց այդ դերից յենելով, Հայաստանի կոմսերիտմիության հենարանական Կոմիտեն վորոշել է կինո մասսայական աշխատանքների շեփությունը դնել կոմսերիտ միության շրջանային կազմակերպությունների վրա: Ահա այդ վորոշումը. — «Առաջարկել շրջկոմներին և բջիջներին վերցնել շրջիկ կինոների շեփությունը, վորը կոնկրետ պետք և արտահայտվի նրանով, վոր շրջիկ կինոն գյուղ գնալիս բջիջը պարտավոր է կազմակերպել նրա շուրջը ջաղլուս աշխատանքներ, ստեղծել հարմարություններ մեխանիկի համար (սնունդ, զիշերելու տեղ) և կառավարության վորոշման հիման վրա, տեղական խորհրդարանին որգանների հետ կազմակերպել շրջիկ կինոյի փոխադրման գործը մի գյուղից մյուս գյուղը: Մենք համոզված ենք, վոր այս բայելիկյան վորոշումը շրջանային և տեղական կոմսոմոլի կազմակերպություններն իրական գործ կզարմեն և վերջ կդնեն այն խայտառակ վերաբերմունքին, վորը հաճախ հանդես է դալիս դեպի կինո մեխանիկը:

ԶԱՍԶԱԽԵԼ ՈՊՈՐՏՅՈՒՆԻՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼՐՋՈՐԵՆ ՆԱՍԱՊԱՏՐԱՍԿԵԼ ԱՄԻԱՏԱՆՔԻՆ

Այդ ամբողջը ցույց է տալիս, վոր կինո մասսայական աշխատանքները կազմակերպող ընկերոջ առաջ դրված են բազմակողմանի, խիստ կարևոր և պատասխանատու խնդիրներ: Կինո մասսավիկը, դա իզեռուղիական ֆրոնտի մարտիկ և հանդիսանում: Այս բանը սլիտի գլխակցելու Անհրաժեշտ և կրկին ընդգծելու վոր

ձևոնաբերիվելիք աշխատանքները պահանջում են, վեր կինո մասսադիվիզը լրջորեն պատրաստվի, խորանախնդիրները մեջ և նախապատրաստի իր ողակները: Հատկանկատվի յուրն ու անվուխուխուրնն այստեղ խիստ վտանգավոր են և կարող են լուրջ քաղաքական սխալները հանգել և այդպիսով վնասները ամբողջ գործը:

Կինո մասսայական աշխատանքներին խոշոր հաստի խանդարում և բավականաչափ տարածված միանգամայն վտանգավոր հանգամանքը, վեր այդ աշխատանքները թերադնահատում են, չեն կարողանում լրջորեն դնահատել կինոյի և նրա շուրջը ծավալված մասսայական աշխատանքները խոշորագույն քաղաքական, դաստիարակչական նշանակուխուրնը Զ-րդ հընգամյակի խնդիրները կենսադործման ասպարիդում Սրա հետ միասին խոշոր արգելակ և նաև կինո կադմակերպուխուրններում բավականաչափ արմատացած նեղմանական-անատրական տրամադրուխուրնները: Համ. կենսակումն իր 33 թ. մայիսի 7-ի վերոշման մեջ այդ մասին գրել և, Վերնոթիկացիայի այդ բոլոր թերուխուրններն արդյունք են այն բանի, վեր կինո կադմակերպուխուրնները գյուղի սպասարկումը դիտում են վերոյես անշահավեա և անխնայ մի գործ, խկ մի շարք կադմակերպուխուրններ (տեղական գործկումները) կինո աշխատանքը համարում են կիսարարեդործական անպայման—ձրի սպասարկում: Կասկածից վեր և, վեր գյուղի կինո սպասարկման բարելավումը, կինո մասսայական աշխատանքները ծավալումը հնարավոր և միայն այն դեպքում, յերը կուսակցական կադմակերպուխուրնները վճարական պոյքարով կլախջախեն այդ սպարայունխատական տրամադրուխուրնները և անհրամշտ հատարակայնուխուրն կատեղմեն կինոյի շուրջը:

Պայքարելով այդորինակ արամադրությունների
 և պրակտիկայի դեմ, կուսակցական, կոմյերիտական
 կազմակերպությունների, Մ. Տ. Կ. քաղաքափրկների, կլինո
 աշխատողների խնդիրը պիտի լինի լայնորեն ողտա-
 դործել կլինոն ավորպես դյուղում ամենորյա քաղա-
 քական-կուլտուրական աշխատանքների կազմակերպ-
 ման գործիք, վերպես լավագույն միջոց միլիոնավոր
 կուլանտեսականներին և սովխոզներին սովորեցնելու
 սոցիալիստական խոշոր հողագործության ձևերը, դյու-
 ղատնտեսական բարդ մեքենաների խնամքի կազմա-
 կերպումն ու ոգտագործումը և ազրոտեխնիկան դյու-
 ղատնտեսության մեջ կիրառելու գործումն (Կենտկոմի
 նույն վերոշումից)։ Իսկ այդ նպատակի կենսագործման
 լավագույն ուղին՝ կլինո-մասսայական աշխատանքների
 ծավալումն է։



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038851

[084] ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

A $\frac{I}{3887}$



Ա. ԿԵՐԱԿՕՅԱՆ

Массовая книжная работа